բարութիւն, ժամանակասպանութիւն, թղթախաղասիրութիւն.... վերջապէս ինչ տեսակ անպիտանութիւն առնս այտեղ կը նարվի և զարմանալին այն է, որ օրից օր յառաջադիմութեան տեղ յետադիմութեան մէջ է զլրվում Նուխին։—Ինչ է ներկայացնում նրա առնտրը—յետադիմութիւն, նրա բարոյականութիւնը—յետադիմութիւն, եկեղեցին, ուսումնարանը, քահանան, վանականը, պաշտօնեակաս�ը.... բոլորը, բոլորը յետադիմութիւն։ Լաւ է այս գոլտանգների տեղ ձեզ, յարգելի ընթերցող, փաստեր ներկայացնեմ։ Ահա վերջին հինգ չարաթվայ մէջ Նուխում կատարվում են այն ազնիւ քաջագործութիւնները, որոնց մասին անցեալ նամակումս խոստացայ զրելու, ահա և փաստերը։

Մի թուրք երիտասարդ, կասկած տանելով իր երկու քոյրերի բարոյականութեան մասին, հինգ չարաթ էլ որ սպանեց մէկ քրջը, միւսին էլ հարձեցիս, հարեանները աղաղակի վրա հաւաքվելով, ազատում են։ Չարագործին բանտարկեցին։

Մի հայ երիտասարդի իր տան բակում՝ զիլերը քնած ժամանակ գնտակի հարուածով սպանեցին։ Չարագործը մնաց անյայտ։

Մի հայ 16, 17 տարեկան տղայ՝ որ այս տարի էր աւարտել քաղաքային դպրոցում, քաղաքից դուրս հայոց գերեզմանատում սպանվեցաւ իր հետ աւարտած իր հասակակից ընկերից, որի խնդրելով գնացել էր նրա հետ մանգալու։ Սրան և մի ուրիշ երիտասարդ (որ չարագործի վկայութեամբ իրա սովրեցողն է եղել) բանտարկեցին։

Պրիստաւի օգնականը իր երկու եռասվանիներով գիշերը փողոցում գնալիս երեքն էլ գնտակի հարվածից ծանր վէրքեր ստանալով, հազիւ ազատվեցան սպանվելուց։ Հարուած պատճառողը չը յայտնվեցաւ։

Այս բոլորը քննիչների քննութեան, իսկ Նուխեցիներին խստացնութեան՝ առատ նիւթ է տուել, ձեզ էլ, յարգելի ընթերցող, մի պակեր տեսնելու, թէ որքան ապահով է կեանքը Նուխում, մի փատ թէ որքան օր ըստ օր է ծաղկում է մեզանում եղբայրասիրութիւնը, գթասրտութիւնը, բարեգործութիւնը և յառաջադիմութիւնը։

Իսկ նայեցէք մեր բիրմայի պատուհանից այն կանաչ սեղանի չորջը խիստ մոլորված բազմութեան վրա, այն բազմանոց կերպարանքով խաղաթղթին յառած անքուն աչքերով մեր խելօքներին, մեծ մասամբ չինովնիկներին, այն ժամանակ կը համոզվեք թէ մեր քաղաքի լուսաւորված իշխանները ինչքան թանգ են գնահատում իրանց ժամանակը, որքան թշնամի են ժամանցանութեան, ժամանակասպանութեան և թղթախաղասիրութեան։ Մթթէ սա յառաջադիմութիւն չէ։

Իսկ անասրբերութիւն և սառնասրտութիւն ասած բանը ճրագով չես գտնի Նուխում, եթէ հարցանենք մեռ եսթանսուն մարդ հրաւիրվի՝ հազիւ հինգ հոգի կը գան, եթէ 80 հոգի ժողովի հրաւիրվի՝ երկու չորսիս ներկայ կը գտնվեն։ Իրաւ մթթէ Նուխեցուն սառնասիրտ մեղք է ասելը։

Եթէ յոգուտ վանայ սովասանների ստորագրութեան թերթի մէջ չի ասայի մեր հարուստը մի քանի կոպէկ գրվել, չի գիայ սովաման պատանուն, Նուազած օրիորդին, լալագին մոր թախանձանքին—ինչպէս չասել նրան թէ դու քարասիրտ ես։ Մթթէ քարասիրտ չես հարուստ Նուխեցիս։

Զորս, հինգ րուբլով փորից պատուղ Նուխեցի, Աստուած գիտէ քեզ. 14 ռուբլու ցորենը այժմ 4 ռուբլով ես առնում, իսկ դու իմանալով վանեցի եղբօրդ մահը, իմանալով թէ նրա կեանքը քեզանից, քո կոպէկից է կախված՝ ինչ գուժ ցոյց տուիր նրան։ «Մերկ էի, չոր չը տուիր հագնելու, քաղցած էի, հաց չը տուիր. յիրիր, այսպէս պէտք է ասէ քեզ մի օր քո գթած Աստուածը։ Մթթէ դու չը լսեցիր որ մարը կաթի տեղ իրան ցանցաած ծծի արունն է տալիս, մթթէ դու զուակի տէր չես...։ Հազար անգամ գնա ժամ, ծունր դիր, Աստուածամայր երեսցիր, կասեմ ալեարդին որ այդ սուտ է, կասեմ որ դու քարասիրտ ես։

Զ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵԹԻՑ

—

Յուլիսի 15

Նոր-Բայազէդի գաւառում տիրող թանգութիւնը հեգեհեգ սկսեց մեզմանալ և հացի գինը իջաւ մինչև 80 բ.։ Գնելի այսպիսի ցածանալուն օգնեցին մի կողմից արքունի հացի բաժանումն, միւս կողմից դրացի գաւառներում հունձերի հասնելը, առանց դրանց մինչև մեր հացերի հնձվելը՝ գները չափազանց կը սաստկանային։ Մեր հունձը ևս մօտենում է. նրան այս տարի ոչինչ չէ սպառնացել, հերվայ վնասակար մգներից մի հատ անգամ չէ երևում, թէպէտ մի քանի օրվայ անձրևների պակասութիւնը՝ դրդվից ժողովրդի տրամադրութիւնը, վախեցնելով նրան չորութիւնով, բայց այդպիսի դրութիւնը երկար չը տեւեց, որովհետև անձրևները իրանց գալը այնքան չը յետաձգեցին։

Աշտեղ Նորերումս բացվեց արքունի դանձարան, դա իսկապէս մեծ թեթեւութիւն է մեր գաւառի համար, նրա համար որ՝ տուրքերը առաջ երեսն էին գնում, պատճառելով անպրին ճանապարհին ծախսեր։ Բացվելու է նաև երկու դասատնից արքունի ուսումնարան, այժմեան պատրաստական փոխարէն, որը զոյութիւն ունի միայն թեմականներից, պատրաստելով երբեմնապէս կառավարութեան համար գրագիրներ։ Հոգևոր ուսումնարանը՝ ջնորհիս հոգաբարձութեան, յառաջադիմութիւն է ցոյց տալիս, մինչդեռ Նրանից մի երկու տարի առաջ, ամենասանմիթեամբ գրութեան մէջ էր գտնվում թէ ուսման, և թէ դրամական կողմանէ։ Այս յուլիսի 10-ին վերջացաւ այդ ուսումնարանի հարցաքննութիւնը և ժողովուրդը գոհ մնաց նրանից։ Ցեսուչը, ուսուցիչները և աշակերտները, եկեղեցական փառաւոր հանդիսից յետոյ, կարգեցին ճառեր, և ամեն մէկը իր կողմանէ ցոյց տուեց ուսման կարողութիւնը։ Ուսուցիչներից մէնը՝ իր ճառում խոսեց հասարակութեան կրթութեան վրա, բացատրելով նրա անհրաժեշտութիւնը և օգուտ առանձին յայտնվի այդ, ուրց թեմումը մենք ունեցել ենք երկու հանրապարական, որոնք գործում են հասարակութիւնից դուրս, և մի հատ էլ արտասահմանում ուսանող։

Աւելի զմրագղ են մեր գիւղերը. նրանք կորցրել են նահանջական կեանքը անցած և վարում են մի ուրիշ այանդաղը, ընկղմված խոր տգիտութեան մէջ. նրանցում ոչ մի տեղ ուսումնարան չը կայ, տեղ տեղ երեխաները դեռ չարունակում են տիրացուների մօտ Սաղմոս մրմնջալ, այս կարգից դուրս են Լուսիաբս և Օլալ գիւղերը, որոնք ունեն փոքր ի չատէ կանոնաւորված ուսումնարան։ Ամեն մի գիւղական հասարակութիւն, ինչքան էլ նա դրամական նեղ միջոցի մէջ գրված լինի, կարող է մի ծխական ուսումնարան ունենալ. դրա համար չէ հարկաւոր ժողովրդի օգնութեան դիմել, այլ կարող է այն աղբիւրներից, որոնք ամեն տեղ կան, օգուտ քաղել և ծառայեցնել օգուտը ուսումնարանին։—Օրինակի համար Նորադուզ գիւղը կարող է խաչանմուրի եկամտով պահել մի ուսումնարան։ Եկամտան ուսում է և մի ուսան էլ ջուր վրէն խմում է մի մասաւոր մարդ, որի տանը մէջ անգամ գտնվում են մասունքներ, որտեղ որ դիտում են լաքմաթիւ ուխտաւորներ հասարակ օրերը անգամ։ Այսպէս թէ մի ուրիշ պէս,հարկաւոր է Սուրբ Նշանը (մասանց անունէ) տեղափոխել ուրի պատրաստուոր տեղ եկեղեցին, որտեղից նա վեր է առած, այն ժամանակ, երբ Նորադուզցիք թողնում էին իրանց հարենիքը—Քորուն և Մուսուն գիւղերը։

Մեզանում, ձեռնտու և արդիւնաբեր հողագործութիւնը կորցրել է իր նշանակութիւնը, առաջի տեղը բռնում է առևտրականութիւնը՝ որը միշտ ընկած դրութեան մէջ է եղել, նմ մանաւանդ, այս տարի Առևտրականութեան ընդարձակվելուն արգելարիթ պատճառ է դառնում ճանապարհային ուրիշ քաղաքների հետ յարաբերութիւն չունենալը, պատճառ որ Նոր-Բայազէդը չինած է մի անկիւնում, արքունի ճանապարհից եռեսուն վերստ հեռաւորութեան դուրս։ Ը նայելով, որ հանգամանքներն առևտրական յաջողութեանը չեն օգնում, այնուամենայնիւ. հարկաւորութիւնից դուրս կրպակներ կան, արհեստաւորները թողնում են արհեստը և ձեռքեն զարգում հանգիստ տարուստ—վաճառականութեան։ Այսպիսով մէկ մէկ խանդարում են, խելով իրարից աչառանքը և վերջաւորութիւնը այն է լինում, որ մի կարգին արհեստաւոր, նոյն ձեռով հողագործ և առևտրական չէ գտնի։ Մի և նոյն ձգտումը, որը կայ դէպի առևտուրը, փակագծի մէջ ասած, տեսնվում է և գրագրութեան վերաբերմամբ. այս վերջինն էլ իր կողմանէ հրապուրիչ է և չատ հետևողներ ունի։

Հողագործութեան հետ համահաւասար օգտակար է և անասնապահութիւնը բայց այդ պարապմունքն՝ այնքան ընդունված չէ, չը նայելով որ տեղական կլիմայական պայմանները՝ չատ և չատ նպաստաւոր են նրա ծաղկելուն։ Ամեն մի գերդաստան ունի միմիայն իր հարկաւոր եղածին չափ անասնեղէն, նոյն չափով էլ պատրաստում է իւղ, պանիր և ալիւր, չը կարողանալով աւելացնել և աւելին ծախել, իսկ երբ հանձում են նրա վրա դրամական նեղ միջոցները, նա անձարացած, կարում է, ինչպէս ասում են, իր բերանիցը, և ծախում է, զատապարտելով իրան չոր և ցամաք նաստելուն։ Դրացի գաւառացիները ընդհակառակն են վարվում, նրանք գարնան սկզբից մեծ խմբերով գիմում են Նոր Բայազէդը ընդարձակ արօտատեղերն և մեծ օգուտ են ստանում իւղ և պանիր պատրաստելով։

Թէ մեր գաւառը կարող է տալ մեծ հարստութիւն, դրանում կարծիք չը կայ, հողը արդիւնաբերում է՝ ցորեն, գարի, հնձար, տարեկան, պղտզի, կտաւհատ, սօրոլ, կանեփ, կարտոֆել, կաղամբ և ուրիշ չատ արմատիք, բայց հողագործը անարդարեր է և չէ ուզում օգտվել, պատճառներից մէնն էլ սա էր, որ ժողովուրդն այս թանգութեան տարին սոված մնաց։

Ինձ մնաց մի երկու խօսք ևս ասել։ Ճանապարհային չարաբերութիւններից ի բաց, և հեռագրատան չունենալը մի կողմ դրած, ժողովուրդը զուրկ է բժշկական միջոցներից—չունի ոչ մի դեղատուն որտեղից որ կարելի լինի վերցնել դեղեր. հարկաւորվում է բեռնատար Երևան վազեցնել, ոտքի տակ տալով միմուռուազ 92 վերստ, ուրեմն ինչն իրան հասկանալի է հնձանդ գրութիւնը՝ որը մինչև գնդերի ստացվելը, չատ անգամ պատճառում է որ մեռնում է ոտքերը։ Հարուստն կարող է էլ աւելի հեռու տեղից, քան թէ Երևան բերել տալ, նա ունի կարողութիւն, իսկ աղքատն ինչ հուլով։

Այս հետ միասին ես աւելորդ չեմ համարում գցել մի գէպք՝ որը արժանի է ուշադրութեան։ Մեր քաղաքացիների մէկի ձեռքում ինձ պատահեց տեսնել ձուից նոր դուրս եկած հաւի ճուտ, որը ունէր երկու գլուխ, այդ երկու գլուխներն էլ ձայն էին հանում. գլուխները հաստատված էին մի պարանոցի վրա մէկ մէկի կողմ, մնացեալ անդամները, թէ ներսից և թէ դրսից մէկ ճուտի էին։ Թեզմ հրէշը մի գէպ ժամու չափ ճչալուց յետոյ սատկեց, չարժելով չասերի մեռանատութիւնը, այս և այն գալու պատուհասների վրա։

Եղիկ

ՆԱՄԱԿ ԴԱՎԱԼԻՑ

—

22 յուլիսի

Կարծես թէ Դաւալիը երբէք իր ստոր գրութիւնից վեր բարձրանալու չէ։ Այս գաւառի ժողովուրդը ամենայն տեսակ զրկանք—թէ բարոյական և թէ նիւթական—պիտի քաշէ, վասն զի ճանապարհի խրաքանչիւր վճիռը անարդել պիտի իրագործվի։ Թէև գաւառն այնքան էլ ընդարձակ չէ, սակայն այդ անառաջադէմ գաւառում այնքան մանր—մանր բաներ են կատարվում, որ մարդ մի առ մի գրել անգամ չէ կարողանում։

Գիւղերումն ուսուցիչը աշակերտներին երգեցողութիւն չէ սովորեցնում, ասելով «ձայն չունեմ, չեմ կարող ուսուցանել»։ Օրվայ մեծ մասը թուրքերի հետ քէֆ անելով է զբաղվում, քան թէ աշակերտաց հետ ուսումնարանում պարապում։ Սորա պէս և Քարվանսարայում առաջին և երկրորդ տարին աշակերտները կրօն սովորելու կարողութիւն չունեն։ Երեի մեր պատուելիները կամենում են ստատուածարանութիւն ու հոգբարանութիւն դասախօսել, բայց զժբաղդաբար աշակերտները դրան համապատասխան հասունութիւն չունեն։

Գիւղացիները իրանց կարգովը շարունակվում են, իբրև. ՀաղմանՁէի հեռանալը պատեղի նահանգապետութիւն պաշտօնից՝ գողերի համար ընդհանուր ազատութիւն եղաւ, վասն զի այժմ պէտք է անասունների տէրը իր կենդանիքը պահպանէ ամենայն զգուշութեամբ, եթէ ոչ հակառակ դէպքում գասարի կը նստի իր կենդանիներից....Այժմ մի քանի ժամանական գողեր դարձեալ իրանց ընտանեկան օրերն են սկսել, էլ փողով մաս առնել չեն ուզում....

Ամենայն տեղ մոբեխով լցվել է։ Այս սովորական մոբեխներից է, որ ոչնչ զգալի վնաս չէր տալի։ Մոբեխների մեծութիւնը հասաւաք է capranca անուանվածի երկուսին. թեերը բաւական երկար են և թռչում են այնպէս ինչպէս ճնճղուկն է թռչում։ Այդ վնասակար միջատները մեծ քանակութեամբ դեռ չը հնձած արտի, լոբու, ծխախոտի վրա թափված ուռում են։

Քոխմաները փոխանակ խօսքով փայտով են ժողովրդի հետ գործ ունենում, փոխանակ վճիռներ կայացնելու՝ զօրեղի, ազի խօսքը տալիս չեն գցում, ծառային և կամ ստորադրվողին ծեծում—փետ ու միս անում, ինչպէս ժողովուրդն է ասում։

Ոգեմիթայի իշխանում մօտերումս փսատ են յաջիտակել, սակայն քանակութիւնը յայտնի չէ։

Ամսիս 5-ին Շամչաղնու Թոխլզ գիւղում մի պատուական հայ երիտասարդ են սպանել։ Պատնեղը եղել է իր օրեղբօր որդին։ Ասում են, որ չարագործը իր դժոխային գործը կատարել է գիշերով, անկողնում պառկած ժամանակ, դաշնակը սիրաք խրելով։ Նա միւս եղբօրն ևս սպանել է ցանկացել, սակայն սխալմամբ յիշային է սպանել։

Մի մարդ (Խաչիաւանում), որ հազիւ երեսուն տարեկան լինի, ամուսնացած է մի այրի վրա, որ 40—45 տարեկան է և այժմ որդի չէ ծնում։ Այժմ նախապաշարված երիտասարդը կնոջը տարաւ Մոռնի, Ս. Մեսրոպի գերեզմանի վրա, որ որդի ծնի....

Հ. Մարկոսեան

ՆԱՄԱԿ ՁԻՐԳԱՁԼԻՑ

—

8 յունիսի

Անտարբեր չը մնալով մեր Հայաստանի սովալուկ եղբարց նպաստ մատուցանելուն մէջ, պարտաւորութիւն համարեցինք դնել դուռը դիմել մեր Ջիրբայելու փոքր հասարակութեանը և ժողովեցինք այս փոքր գումարը, 25 բ. 20 կ., որը յղելով ստորագրողց ցուցակի հետ, մնծայայտ ենք որ կը հասցնէ ըստ պատկանելոյն և տեղ կը տաք ձեր «Մշակ» թերթի մէջ նուիրատուաց անունների. այս փողիցը 20 կոպէկ հանեցինք ծախքս։

Նաղեժդայ վարդապետանց 3 բ., Անուշկայ Դաւուխանանց 1 բ., Գալէլեայ Մ. Շահնազարեանց 1 բ., Դաւմայ Տէր-Դաւթեանց 1 բ., Խաչայ Մ. Շահնազարեանց 1 բ., Կասինկա Դաւ զարբէկեանց 1 բ., Բակում Խանում Զվանչիր 5 բ., Փարի Խանում Նիւթալիբեկով 3 բ., Անիչկայ Անտոնեանց 1 բ. 20 կ., Աննա Շահկալարեանց 1 բ., Մարիա Զալատիցկա 1 բ., Մանասան Դաւթեանց 1 բ., Տէր-Յովհաննէս Տէր-Մինասեանց 1 բ., Մարգարիտ Օրբէլեանց 1 բ. 40 կ., Կասինկայ Դանէլեանց 1 բ., Սօֆիայ Զաքարով 20 կ., Մարգարիտ Զարելով 20 կ., Նանասի Պետրոսեան 20 կ., Մարյ Օրբէլեանց 1 բ., Ընդամէն է 25 բ. 20 կոպէկ։

Օր. Մարիամ Օրբէլեանց, օր. Անուշկա Դաւուխանեանց։

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

—

10 յունիսի

Շատ անգամ կարդալով ձեր պատուական լրագրի մէջ վանայ սովասանց եղբարց կրած անասելի նեղութիւնները, և նոցա համար եղած նուիրատուութիւնները կարսի Ս. Լուսաւորչեան դրպրոցի աշակերտները պարտք համարեցինք յետ չը մնալ այդ սրբազան պարտականութիւնից և անհրաժեշտ գործից, և թէ նուիրատուութեամբ հաւաքած, և թէ նոյն դպրոցի աշակերտաց ունեցած ընկերութեան փողից երեսուն բուբլի ուղարկում ենք ձեր մեծապատուութեան, և խնդրում ենք, որ բարեհաճեք ընդունել մեր այս չնչին նուէրը, և հասցնէք ուր հարկն է, իսկ նուիրատուաց անունները ձեր պատուական թերթի մէջ մի անկիւն չնորհէք, ի քաջալերութիւն նոյն աշակերտաց որք են։ Միսաք Զարգարեանց 2 բ. 20 կ., Աղէքսանդր Խանամիրեանց 1 բ., Յովհաննէս Սարգսեանց 1 բ., Վարդգէս Շահրազանց 1 բ., Մկրտիչ Գոխլիկեանց 1 բ., Զուրաբ Ազատեանց 1 բ., Աբսէն Զմչկեանց 1 բ., Յարութիւնեան Գէորգ 1 բ., Զազարեանց Մկրտիչ 60 կ., Յովհաննէսեանց Յովսէփ 60 կ., Սարուխանեանց Մուշեղ 50 կ., Աստուծանց Գէորգ 50 կ., Գոխլիկեանց Համասասպ 40 կ., Տէր-Յովհաննէսեանց Մանուկ 40 կ., Լեւսուրեանց Սենեքերիմ 25 կ., Զուկասեանց Սաղաթել 25 կ., Դուրկարեանց Յարութիւն 20 կ., Փալանճեանց Մարտիրոս 20 կ., Մելքոնեանց Բարսեղ 20 կ., Մատաղչանց Պետրոս 20 կ., Վարդանեանց Աբամ 20 կ., Ղազուզեանց Կարապետ 20 կ., Մատինեանց Յովհաննէս 20 կ., Տէր-Թաչատրեանց Վարոս 20 կ., Մուրատեանց Մի-